

ԲԱԺԱՆՈՐԴՈՂՐՈՒԹԻՒՆ

Պուշկարին	համար
սարկիսի	12 ֆր.
վեցամսայ	7 "
Արսասահմանի	
համար. ծախիսի	15 ֆր.
վեցամսայ	8 "
Անտրիսայի	համար
սարկիսի	3 ֆր.
վեցամսայ	1.50 "

Ծանուցումն տողը սուրբին և ևսին համար 40 սանթիլ իսկ վերջին ևսին համար 20 սանթիլ է. երեքին և էյի սեղաններու համար 20 0/0 զեղը կրուայ:

Վառնայի համար ան ֆե 10 սանթիլ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ. ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

R. P. Kalmegarian Meschtarietengasse
(Aubriche) W. 4.
Vienna

Կամակ և ցրսս
իկի խոբարուրանս
հասցիին

Редакция на вѣстникъ
"Шаржумъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարին համար
անի

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար
անի

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ևս չեն
սրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ ԿԱՆԵՆԻՎ ՎՃԱՐԷ

«ՏԱՌ ՏԱՐԻ Հ. Յ.

ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋՊ

Արդէն այս անունով բը
բոշիւրը յանձնված է սպագ-
րութեան:

Բոշիւրի նպատակն է, առանց
խժժանքի Դանակցութիւնը
մէջ տեղ գնել իր իսկութեամբ
և միեւնոյն ժամանակ փաստել
թէ՛ իմ պայքաւը սկսված է շատ
հին ժամանակից և վերջերս
միայն սուր կերպարանք ընդու-
նեց. Ինչպէս է որ բոշիւրի
մէջ փաստող զօկիւմանները
մեծ տեղ պիտի գրանեն:

Բոշիւրի գինը սպագրութիւ
նից վերջ 3 ֆրանկ է լինելու
իսկ բաժանորդ գրվողի համար
2.50 ֆր.:

Դիմել Շարժումի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաֆէն կը գըտ-
նուի Վիեննա Թրանց Ժողկֆ քա-
րափին վրայ. կը ստանայ զանա-
զան հայերէն թերթեր. Ան հա-
սարակ բոլոր հայ կամարեւելք-
ցի վաճառականները այս տեղ կը
յաճախեն. Աստի օտար երկիր-
ներէ եկող հայերը կը հրաւիր-
ուին գիմել հոս, ուր պիտի
գտնեն իրենց յարմար գիւրու-
թիւններ և անհրաժեշտ տեղե-
կութիւնները:

ՍՈՎԸ ՎԱՍՊՈՒՒ—
ՐԱԿԱՆՈՒՄ

Հին ցաւերից է սա. հայը կամ
սոված, կամ սրախողոց և կամ
թէ գաղթական պէտք է լինի...
ուրիշ ճակատագիր չունի... Սովը
տիրում է Վասպուրականում, և
ամէն տեղ սկսել են այս ձեռով
կամ այն ձեռով գրամ հաւաքել...
Մեր ազգային մարմինները,
ազգային ջոջերը, ինքնաբերա-
բար երբէք չեն զգացվում. նը
բանց պէտք է հրել, լըզել...

ազգային ազէտների միջոցին,
որպէս զի նրանք կարենան և ու-
զեն մի բան անել:

Անցեւ իրերկոյ մի վասպու-
րականցի երիտասարդ թախիժը
երեսին հարցնում, փնտաւմ էր,
— արգեօք ներկայացում տա՞լ,
թէ գիմել ջոջերին որ հանգա-
նակութիւն անեն... Խորհուրդ
տւի թէ հանգանակութեան սկը-
սիլ և թէ ներկայացում կամ
կոնցերտ տալ. հանգանակութիւ-
նը ջոջերի համար, որովհետեւ
նրանք առհասարակ հայ ներկա-
յացումների քիչ են յաճախում...
Կանանց մէջ էլ թող հանգանա-
կութիւն լինի. այն յարգելի
տիկիւնները՝ որոնք այնքան ե-
ռանդով Վարնայի եկեղեցին
զարդարելու համար աշխատե-
ցին շատ բնական է որ կը ջա-
նան և իրենց սոված քոյրերին
մի կտոր հաց տալու համար սա-
պարէզ իջնել. որովհետեւ հա-
մուզված եմ թէ, յարգելի տի-
կիւնները գիտակցութիւն ունեն
հակնալու թէ՛ աւելի բարի և
մեծ գործ է մի թշուառ մօր—մա-
նուկի օգնութեան հասնելը,
քան թէ 40 եկեղեցի կապերտով
ու խալիով զարդարելը... Խճա-
ւին օգնելու մէջ կիները մեծ
յաջողութիւն են գտնում ամէն
տեղ. թող Վարնայի տիկիւնները
երեւան իրենց բարձրութեան
մէջ. և այդ նպատակին հասնե-
լու համար թող վասպուրական-
ցիք գիմեն նոյն տիկիւններին՝
որոնք յաջողցրին եկեղեցին
զարդարելու գործը:

Սմբողջ Բուլգարիոյ հայ գաղ-
թականութիւնը պէտք է սով
եալներին օգնութեան հասնի:
Ռուզվելիին ուղղած աննպատակ
հեռագրի համար ամեն քաղաք
փող էր հաւաքում, սովեալնե-
րին նա պէտք է տայ աւելի շատ,
աւելի եռանդով... հիմա է որ
պէտք է ճամբորդէին միթիւնկ-
ներ սարքելու և սովեալներին
օգնութեան հասնելու համար
յանձնախմբեր կազմակերպելու...
Բայց հիմա իրարանցում չը
կայ, միթիւնկներ շարքե

րում, որովհետեւ ինչ կայ որ,
վասպուրականցին սոված է.
գաղթում է... դա ինչ նշանա-
կութիւն ունի:

Դա ընդհակառակը լալկան յոգ
ւածների նիւթ կը տայ, կարելի
է վայել ջոջել... — երկիր, եր-
կիր, երկիր... բայց երկրին դը-
րական օգնութիւն հասցնելու
համար ոչ մի գրական քոյլ չա-
նել...

Վասպուրականցին սոված է.
պէտք է հաց տալ. առայժմ ու-
րիշ ոչինչ. և ամեն հայ պար-
տական է հայ լաւ բաղձանքնե-
րի այդ միջոցին արագաբար
օգնութեան հասնել:

ՎԱՐՆՈ

ԴՈՒՍԱՆ ՑՐՎԱԾ

Այլեւս իրողութիւն է, որու
առաջին նրբստիսանական ժողո-
վը ցարի հրամանով ցրված է. ա-
զատական հոսանքի հակառա-
կորդները վայրկեանական, աւ-
ժամեայ յաղթութիւն տարան.
վարանտ, տատանող նիկոլաւ Բ.ը
վճռողական քայլը արեց. սակայն
գէպիտ. դէպի հին բռնակալա-
կան կարգերը... Ռուսիան այսօր
Յարի այդ քայլովը, աւելի վտան-
գաւոր կացութեան մէջ ընկաւ.
արեան հեղեղների համար ճա-
նապարհ բացվեց և այդ հեղեղ-
ների մէջ կամ պիտի խեղդվին
Ռումանիւները—կամ բազմաթիւ
ուս ժողովուրդը...

Եւրոպական մամուլի մէջ տե-
ղեկութիւններ կան որ Աւստրիա
և Գերմանիա Յարին խոտացել
են զէնքով միջամտել—թէ
Ռուսիայում մեծ ապստամբութիւն
ժագի և Ռումանիւների տան վը-
տանգ սպառնայ. այդ լուրերը
հերքվում են թէ ոուս և թէ խնդ-
րի նիւթ եղող պետութեանց
պաշտօնական շրջանակնե-
րի պաշտօնական յայտարարու-
թիւններով. սակայն կասկած
կայ որ ճիշտ է. միապետները
հայրենիք չունին, նրանք իրենց
հին գիրքը պահելու համար


ճիշտ ընդունակ են եղել դաւա-
ճանել թէ իրենց, բազդի բեր-
ժամը, կառավարած երկրին և թէ
ժողովրդին... նիկոլան չէ որ բա-
ցառութիւն պէտք էր կողմէր...
Իհարկէ այսօր նա կը ցանկար որ
Աւստրիացի և Գերմանացի զին-
ուորները գային ուս ժողովրդին
ճշխու. որովհետեւ հարազատ
չինուրները այլևս չեն վայելում
Յարի վաստակութիւնը և շատ օ-
րինակներ աւելի որ իրենց հա-
մակրութիւնը մարտնչող եղբայր
ժողովրդի կողմն է...

Ռուսիոյ մեծ փոթորիկը պատ-
րաստվում է. թէև Դումայի
լուծումը անմիջական խիստ դժ-
գոհութեան նշաններ գեռ երե-
ւան չը բերեց ժողովրդի կողմից,
բայց այդ լուծութիւնը աւելի
խորհրդաւոր, աւելի փտանգաւոր
է. քան վայրկեանական փոթո-
րիկները...

Պատմական ամենամեծ կա-
տասարօքներից մէկի նախընթաց
օրում ենք... կատասարօքներ ու-
րոնք զոհ են խլում հարիւր հա-
զարներով. Ռուսիային վիճակված
չէ եղել աւելի փաքթութիւն զոհե-
րով ձեռք բերել այն, ինչ որ
ձեռք բերին միւս եւրոպական
ժողովուրդները...

Մաղթենք յաջողութիւն ուս
ժողովրդին իր հակախական պայ-
քարի մէջ. որովհետեւ ուսական
բռնակալութեան տապալումը
բարիք է ոչ միայն ուսների,
ուսասպատակ այլևայլ ցեղերի,
այլև ամբողջ մարդկութեան հա-
մար:

Ռուս ժողովրդի յաղթանակը
իր պայքարում իհարկէ անկաս-
կւծելի է. բայց ժամանակ և զոհ
է պահանջվում. բռնակալու-
թեան մօլոխը այդպէս է բարե-
հաճում. ցանկանք որ յաղթա-
նակի հասնելու համար պէտք ե-
ղած ժամանակը աւելի կարճ և
զոհերի թիւը աւելի քիչ լինին...



ԹՈՒՐԿՈ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆԻԻ
ԲՍԱՆԵՒԼԻՆԵՐԻ ԱՄԵՆԱԿԸ

1880 - 1905

(Նիւթեր հայոց հորագոյն
պատմութիւնից)

Ը.

(Շար. նախորդ քիւնն եւ վերջ)

1880 թուականի աշնան էր եւ մեծ սովը առաջիկայ ձմրան պատճառով առաւել եւս սպառնալից մի կերպարանք էր ստանում, աչքի առաջ ունենալով տարուայ բերքի նուազութիւնը եւ պատերազմի արհաւիրքներէն—թաւան—թուրուհի չոր դուրս եկող աղքատացած ժողովրդեան բազմակարօտ խղճալի դրութիւնը, Բայց այնտեղ էր բարեբախտաբար Խրիմեան Հայրիկը, որ Արծուի աչքերով Վարագայ բարձունքներից ուշադրութեամբ հետեւելով օրուայ հրատապ հարցին—սովին—գերմարդկային ճիգեր էր անում՝ անխնայ եւ անձանձիր կերպով սոսկալի աղէտի առաջը անհեղուկ էր այդ աշողուեց նրան այն ժամանակ կատարելապէս էլ աւելու Հայրենասէր ներսէս պատրիարքը (որի մասին մի բանաստեղծ երգեց այն ատեն.

Սրբին հիքին ու Հայրենեաց
Նա կը սփռի սխուր լալիւն,
Եւ Ազգային սուրբ իրաւանց
Մատաղ կուտայ կեանքն ողջոյն:
Օ՛հ արիք երևել ի հանդէս,
Տոնել զներ նոր ներսէս,
Որ իր շուրջը ի սփիւռ,
Կանգնէ տաճար, լուսասփիւռ,
Հոն քաւելու դարևոր
Ազգին վիշտերն բիւրաւորոյ:
Օգնում էր Կ. Պօլսից եւ անզուգական Գրիգոր Արծրունին կովհասից

Մ. ՅՈՂԱԿ

ԱՐՅՈՒՆԻՔՈՏ ՊԱՏԱԽԱՆԵՐ

Ա.
ՊԱՏՐԱՆՔԸ

(Բարիզահայ կեանքէ)

Բոլոր մարդոց դէմքերը ճշմարիտ են, ինչ ալ իրենց ձեռքերն ըլլան,
Այլ չկայ երբէք ճշմարիտ կին մը՝ ճշմարիտ դէմքով:
ՇԵՅՔՍԻՐ

Բ.

Թէվէքէլեան ընտանիքը կը պատկանէր Պոլսական այն դասակարգին՝ որոնց միակ անապատութիւնը կը կայանայ տեսնել զաւակներն, Եւրոպայէ, Բարիզէ վերադարձած կամ մենենագէտ մը, կամ ճարտարագետ մը, կամ փաստաբան մը, եւ կամ, մասնաւորապէս ու նամանաւանդ, տօքթօր մը, — տօքթօր մը, որուն մէջ կը նշմարեն տիկերական գիտութեանց ամփոփումը եւ որու մէջ կը կեդրոնանայ իրենց ամենաթրիպունն երազները:
Թէվէքէլեաններ, Հասգիւղ սեփական տան մը տէրը, ժառանգական նորէն մնացած սկիւրիներ, ապահով

Հայրենիքի կարօտով տանջուած ու առգորուած հայոց ցանուցրիւ ազգը ամեն կողմից ու անկիւնից՝ օժանդակեցին Վասպուրականի արծիւին— խնամելու ու կերակրելու իր ձագուկներին ամբողջ սովառանջ երկրի միջում ու այսպէս ապրից հայութիւնը, բայց, աւել աւելի սոսկալի անբախտութիւններ ու աղէտներ տեսնելու ու կրելու:

Այդ օրերին Կ. Պօլսից ժամանեցին Տր Միլիան Վարագայրեան եւ Քերովքէ Կիւրապեանները, ու զարկած «Հայաստանի Սովելոց յանձնաժողովից» Խրիմեան Հայրիկին աջակցելու խնամատարութեան դժուարին եւ ծանր գործում: Նրանց ընկերացել էր նաև Քիւրապեանի Սիրոն Չիլիկեանը, որին տեսնելով Կաստրականի մօտ ես չափազանց ուրախացայ եւ նրա հետ մենք մի անկիւն քաշուելով սկսանք մտերմօրէն խօսակցել: Նա էլ Պօլսից էր գալիս եւ պատմեց ինչ որուայ նորութիւնները, զորս մենք լրագրաց էջերում չէինք կարդացած, այն է որ ներսէս պատրիարքը յաջողել էր մի յատուկ ֆէրման կորզել Սուլթանից Ունջեան Արիկ էֆէնտու անունով մի խոշոր գրամագլխով ակցիօնէրական փայտից բաղկացած ընկերութիւն կազմելու Հայաստանում ճանապարհներ, երկաթուղի, մի քանի գործարաններ եւ այլն եւ այլն շինելու: Եւ թէ, դրա համար Ունջեանը Բանկ Օթոմանիս 40000 օսմանեան ոսկի կանխագրաւ տուած է: Թէ Տրապիզոնի մօտիկ Ռիզէ կոչուած սիրուն, փոքրիկ նաւահանգիստը Սուլթանը շուրթի է այդ ընկերութեան՝ իբրեւ ապագայ ինքնօլէս Հայաստանի համար Պօլսոյ հետ ուղղակի հաղորդակցութեան մի որոշ յինակէտ, թէ Ունջեանը արտօնել է պատրիարքին գործածել Հայկական գինադրոշմը իր պաշտօնական նամակներին ճա

կատին, Եւ թէ ի մի բան՝ մեծ, երջանիկ ապագայ է խոստացուած հայ ազգին, յորում նա պիտի մոռանայ իր անցեալ բոլոր ցաւերն ու վիշտերը: Եւ այժմ պէտք է գործել հայրենի երկրում ամենայն լրջութեամբ ու խելքով Ես էլ պատմեցի նրան մեր ճանապարհորդութիւնը ու տեսակցութիւնը Շէյխի մօտ: Նա հետաքրքիր եղաւ ճանապարհորդեան տեղեկանալու բոլոր անցուցիկներն, Եւ խելով յետոյ իմ պատմութեամբ, նա բացառանշու թեամբ ասեց.

— Կեցի՛ր ես անոնց հէրը պիտի անխնայ:

— Այսինքն թէ ինչ պիտի անես, — Ե՛տեւնը շան հետ կուեցնել մի միանց կոտորել պիտի տամ ու այսպէս մեր հինաւուրց ամբողջ վրէժը պիտի առնեմ անոնցմէ՝ ասեց Քիւրապեանը քահ քահ ծիծաղելով: Ես սարսափեցայ պայծառ ասած, քանզի կեանքումս մի հաւու վիզն ալ կրտուելը տեսնելիս չեմ կարողացել դիմանալ, իսկ նա ամբողջ մի ազգին ցանկանում էր միմեանց կոտորել տալ ու թամաշա անել:..

Հետեւեալ օրը Քիւրապեանը օրով գլխով անհետացել էր, Եւ ինչպէս տեղեկացանք, նա նոյն գիշերը ուղեորուել էր Շէյխի մօտ՝ մասնակցելու նրա ծրագրած մեծ և արիւնահոգ արշաւանքին:

ԱԿԱՆԱՏԵՄ

*) Այդ մէկը գոնէ ճիշտ է, քանզի ես տեսել եմ ներսէս պատրիարքի առեփարդէն կիլիթօն ուղղած մի պաշտօնական նամակի ճակատին Հայոց Զինադրոշմը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՅԻԱ, 9 Յուլիս 1906

Սյօր երեք օր է որ տեղոյս հասարակութեան մէջ իրարանցում մը կայ:

Իրարանցման պատճառը յայտնի է իրական է հետեւաբար պէտք էր ըլլար:

Տեղոյս «Քնար» երգացիկ խումբը ներկայացում մը պատրաստած էր ի նպատակ քաղաքիս երեւակայելի եւ կարծեցեալ Ազգ. ընթերցարանին ու այդ առթիւ էլ յայտարարութիւններ ցրուած էին ներկայացումի տեղը եւ ժամանակը յայտնելով հրաւիրու էին նաև հասարակութեան որ ներկայ գտնուին եւ քաջալեր հանդիսանան սոյն նախաձեռնարկին: Յայտարարութիւնները ցրուելուն անմիջապէս հասարակութեանը մէջ օրուայ խնդիր եղաւ թէ քաղաքումս Ազգ. ընթերցարան անունով հիմնարկութիւն չի կայ եւ հասարակութիւնը չը խարուելու, չի շահագործուելու համար հարկ համարեցին թուուցիկներ բաց թողնել, ու մատնանշել այն խարբայական արարքը որ կատարուած է ՊԱԿ. ընթերցարան» անուն քոչի ներքեւ:

Ս. մտայ 7 ին արդէն բաց էր թողւել քաղաքումս մի թուուցիկ, քննադատներ ստորագրութեամբ, թուուցիկ որ լաւ կերպով հասկըցած էր խմբակի մը կողմէ սարքուած լարսխաղացութիւնը արդէն իր պարունակութեամբ հրահանգ էր սալիս հայ ազգայնոց որ չի քաջալերեն սոյն ձեռնարկը, բարձր ռանելով ազգային արժանապատուութիւնը եւ ժողովրդական շարժ. ձեռնարկողները պատասխանեցին և այսպէս իրարանցումս որ կերպարանք ստացաւ Սօֆիայում:

Թուուցիկները միտքը ըմբռնող ազնիւ ազգայիններն էլ տուին իրենց

նիւթական տաղանակներէ, այր ու կիւն իրենց առօրեայ հոգը դրած էին մէկ աղջիկի եւ մէկ մանչ զաւկի մը վրայ: օրորդը տակաւին շատ փոքր էր, 10—12 տարեկան հագիւ, որ կայցելէր ամբրիկեան Հօմ Սքուլը, իսկ որդին, երեքը, բաւական յառաջացած ու անցած Կեդրոնականի վերջին դասընթացը հարկ էր պատրաստել իրեն ուսումնական նորագոյն ասպարէզ մը:

Տէր եւ տիկին թէվէքէլեաններ երկար խորհրդակցութիւններ ունեցան, երկար բանակախօսութեամբ սարքեցին եւ, ի վերջոյ, որոշուեցաւ զրկել Արսէնը Բարիզ, թշկական մասնագիտութեան հետեւելու:

Ու օգոստոսի ազուր օր մը, ընտանիքով ու ծանօթներով շրջապատուած, Արսէնը գտաւ ինքզինքը Սիրքէնի, ուրկէ ճեպընթացը պիտի տանէր զինքը Բարիզ, երիտասարդ երեւակայութեանց յաւերժալարը:

Չաւակս, կը թախանձէր մայրը որդուոյն վզէն կախուած նախ քան զայն վազու ղնելը. — բան մը մի խնայիր ինքզինքից, բանի մը կարօտ մի մնար: Սրտիտ ուզածը կեր սրտից ուզածը իմէ, ինչ որ պէտք ըլլայ՝ անմիջապէս գրէ մեզի, Բանի մը նեղութիւն մի քաշեր: Հեռու կեցիր քէլ ընկերներէ. անոր ասոր շատ մի բարեկամտնար. միշտ քեզի յարմարները գտիր: Հասկցար զաւակս, օ՛ն, Աստուած յաջողութիւն

տայ...
Դա եղաւ մայրական վերջին պատուէր ու Արսէն, նետուելով վակօն, ճեպընթացը սուրաց:

Բարիզ ժամանումէն քանի մը շաբաթ վերջն էր որ Արսէն, անբացատրելի դիպուածով մը, մտաւ Պալ Պիւլիէ:

Իրեն համար զլիովին նոր էր այս տեսարանը, կեանքը, թէպէտ եւ կարող ընտանիքի զաւակ, հեռու մնացած էր ան սալոնական կեանքէ ու ճնողքը ամէն զրուշուրթիւն ձեռք առած էին զայն զգրւ պահելու աստաւորիչ մթնոլորտէ: Իրենց այ անձանօթ էր պոստական սալօնի հեղ գութիւնները եւ համեստ պոստի մը վիճակէն անդին չէին անցած՝ երբէք:

Ուստի մէկէն ցնցուեցաւ Արսէն: Բայց այդ ցնցումը երկար չը տեւեց որովհետեւ ճարտար ու փորձառու ձեռքեր չուտով շատս իր վրայ: Ու պարահանդէսի այդ անոտաց գիշերէն ի վեր՝ Արսէն ու Անժէլ մը նացին միմեանց մտերմութիւն:

Երիտասարդին աւելնտ ու ուժմանթիք հոգին, այդ հրապուրիչ էակին թովչանքին ներքեւ բացավառեցաւ: Երբ պարահանդէսի խոնջէնքէն վերջ, իր վայելչօրէն զարդարուած նշարանը, նստած վառարանին դէմը, աղյական հոլանի թե-

ւերն ու կուրծքը կը զննէր, ներքին ըմբոստացումը այն աստիճանի անզուսպ գարծաւ որ՝ ցատկեց վեր պրկեց անոր բովանդակ նուրբ ու վտիտ իրանը իր յայտնի թեւերուն մէջ ու հեկեկաց, պալապեցաւ:

— Ո՛հ որքա՛ն գեղեցիկ, որքա՛ն սիրուն, որքա՛ն գրուիչ... Ը՛տէ՛, պիտի հեռանաս, պիտի զատուիս ինձմէ... Ո՛հ, Անժէլ, հրեշտակս, եթէ միայն գիտնաս թէ որքան կը սիրեմ քեզ, որքա՛ն կը պաշտեմ, գեռ նոյն սառչիւն լուպէն սկսած...
Օրիորդը բառ մը չարտասանեց, սակայն աչքերը փայլեցան ուրախութեան շողով. ապա, տեղաւորելով հոտաւէտ գլուխը Արսէնի ուսին վրայ, հարցուց.

— Սրտա՞նց կը սես այդ թէ...
— Սրտա՞նց... ընդ միջեց ան. ոչ ոչ միայն սրտանց, այլ եւ բովանդակ էութեանս տեսնել է այդ, ու պիտի չը խնայեմ բան մը՝ տիրանալու հրեշտակի մը:

Գլուխը բարձրացուց որիորդը եւ սուր, թափանձող նայուածք մը ուղղեց երիտասարդին, վերջինս որ տակաւին թեւերուն մէջ սեղմած էր որք, տարաւ վառարանին առաջ դրուած երկար թիկնաթուղի վրայ ու ինք եւս տեղաւորուելով մօտը, նորէն դրաւ իր պաղատական հարցը.

— Կը խոստանաս, կը խոստանաս չը հեռանալ... Պիտի վայելես ինչ որ քաղձաս, միայն... միայն միասին

բարոյական աստակը այն խմբակի որ օգտուելով հասարակութեան միա մտութիւնից կուզէր շահագործել եղ բարեկեցիկ գրականները ի նպաստ իրենց խարտեայական արարքի : Յուզուած մեծ և վերջին աստիճանի էր հասած . քիչ մը գիտողը կուզէր իր զգանքը յայտնել այդ խմբակի անյաջող ծառաներին, երբ վար ու վեր գէտ ու դէն էին վազուած . հասկնալու համար թողցիկը բաց թողնող քննադատներին ուղքեր լինելը :

Մենք մեր կողմէն եւս քննադատելով պտոններին, «Ազգ. ընթերցարան» անունը շահագործողներին, գնա հատուած ենք թողցիկը բաց թողնող ազնիւ քննադատներին, որոնք իրենց ազնիւ պայքարով ցոյց տուին թէ հայու ծոցէն դուրս եկող ի ժ եր ինչ միտումով կուզեն պարպել իրենց եղբոր գրականը, լարախաղացութեան քողի ներքեւ, բոտ մեր հասկացողութեան—(թողցիկը բաց թողնող անձերի մասին)—նկատում ենք որ նրանք գիտակցութեան հասած ազգայիններ են որոնք դեռ առաջին թողցիկով եկան գիտակցութեան շունչը փչեցին Սօֆիայի հասարակութեան եւ այդպիսով հրապարակաւ վարկաբեկ ըրին այն խմբակի ծառաները :

Սօֆիարանակ հայ հասարակութիւնը թող ուրախութեան ու ցնծութեան հոգի առնէ, որ ինքն էլ ունի իւր մէջ գիտակցութեան ոգի ունեցողներ (քննադատներ) Ազգ. անունը շահագործողներին դէմ, մենք կը յուսանք թէ քննադատական պայքարի սկսող ազնիւ ազգայինները պիտի շարունակեն իրենց ուղեգիծը ալ ու ձախ մտրակելով գիտակաւոր լարախաղացները :

Քննադատ եղբայրներ, յոռա՛յ դէպի յոռա՛յ մղեցէ՛ք ձեր ազնիւ պայքարը, թո՛ղ կարմրին, թո՛ղ փրփրին անյաջող խմբակի ծառաները, եւ թո՛ղ համոզուին նաեւ թէ գի-

տակցութեան պայքարը մուտք է գործել հասարակութեան մտքին մէջ, շահագործելը զժւար է զժւար այլեւս, ուստի յոռա՛յ պէտք է ընթանալ եւ յաղթութեամբ գուրս գալ պայքարի դաշտից :

Քննադատներին Համակրող

ՇՈՒՄԼԻ, 18 Յուլիս 1906

Անցեալ շաբաթ երեկոյ առիթ ունեցայ ներկայ գտնուելու Շուժ լայի «ԱՐԱՐԱՍ» թատերախումբին կողմէ ներկայացուած Սեւ Հողի ողբերգութեան, տրուած ինը պատմ. վասպուրականի կարօտ եալներուն, ունեն նպատակը վեհ է ամեն տեսակէտով :

Ինչպէս ամէն տեղ, հոս ալ շուրջ երկու տարի է վեր կազմուած է սոյն թատերախումբը, որուն միակ նպատակն է եղած օգնութեան հասնել այն ամէն կարիքներուն որուն պէտքը կը զգացուի մեր այս տարածքի օրերուն : Ո՞ր զգայուն սիրտ պիտի չուզենար օգնութեան ձեռք կարկառել վասպուրականի այժմու ցաւալի վիճակին ամօքելու, պատառ մը հացի կարօտ մնացած ընտանիքներ գերեզմանի եզրը հասած, յուսահատական վերջին ճիգ մըն է որ կը փոխեն մէկ մըն ալ սովի դէմ մաքառելով... կը գովենք «Արարատ» խումբի այս ձեռնարկը որ գիտցան ըստ կարելոյն՝ պատառիկ մը հրամայեն ի, ենց սոված եղբայրներուն :

Խաղը առհասարակ լաւ անցաւ,

լսելիօրէն մրմնջելով :

—Այդքան սիրուն, այդքան հրեշտայանման ու այդքան անպէթ...

—Ա՛հ, Ա՛հ, բարկացար, վշտացար...

Ոտքի ելաւ Անժէլ իր կարգին եւ ուրախ ինզուսով մը, նետելով վերայէն վտաւակը, մտեցաւ Արսէնի.

—Ա՛յս աստիճան է քու սէրդ, այդքան շո՛ւտ կը պաղի... Օ՛, սո շատ տարօրինակ սիրաբանութիւն մը կը լայ ապս թէ ոչ... Ու այդքան ալ անհամբեր... Օ՛ շարամիտ երախայ...

Ահա՛, որքան որ կուզես, գո՞նք քս հիմա, օ՛ն գրկէ զիս, մեղսօրէն, Մի շարածճիւղութիւններ ընիր, մի ցաւեցներ, յետոյ փոխարինել կըստիպուի... Ի՞նչպէս, բաւական է...

Ու ամբողջ ժամանակը, երիտասարդին թեւերուն մէջ ինկած մոլեգին ու կրայոյզ գիրիւնդխառնումի մէջ էին :

—Անժէ՛լ, Անժէ՛լ, կը թոթովէր երիտասարդը անդադար, թէ որ այս բոլորէն վերջ հեռանաս ինձմէ, թէ որ այս ամէնը ժամանակաւոր՝ մէկ քա՛նի ժամայ բանի մը վերածես, գիտցիր որ զիս մեղուցած ես զիս գերեզման դրած : Սոստացի՛, միայն խոստացիր հոս մնալ, միշտ այսպէս երկու սիրահարներ, գիրկ գլխի զուարթ, ուրախ... բան մը չեմ լսը նայիր քեզի, Անժէ՛լ :

—Բացի սէրէդ, ընդմիջեց գեղուն հին շարածճի ծիծաղով մը, միեւնոյն

տպաւորութիւնը «գեղուն» Հայկ. նուագախումբն ալ յաջողութեամբ զարկաւ հայ և օտար երգեր :

Ռ. Եան

Նէշուէ. (Ամերիկա) 9 Յուլիս 1906

Գաղթականութիւնը մեր ազգային հին ախտախնդրէն մէկը եղած է, ու է : Մեր ազգային պատմութեան հետեւող մը՝ պիտի կրնայ իր աչքին առջեւ պատկերացնել իսկոյն որ՝ գաղթականութիւնը ամէն ժամանակ ալ ունեցած է իր զինուորը, սակայն ոչ մէկ ատեն այնքան չէ զգացուած որքան այժմ :

Այո՛, հիմայ որ մեր ցեղին գոյութեան կռիւը կը մղուի, և որ պէտք կայ հասարակական գործակցութեան :

Այս վերջին ամիսներուն մէջ մանաւանդ աւելի սկսած է աչքի զարնել դէպի Ամերիկա գաղթողները : Կարծես հորիք չէին խարէրդցիները որ ամբողջ խարբերդ պարպուեցաւ, հիմայ Գեղեցիներն որ են կուզան խումբ խումբ և կը ջանան գերազանցել առաջիններն ալ, ու եթէ ճիշտ են մեր ականջին հասած լուրերը, Սեբաստիան ալ կերեւի պիտի սկսի գաղթել կամայ կամայ :

Քօլոմպոսի այս երկիրը ինչպէս կերեւի խելքէ հանած է՝ Հայաստանի մեր եղբայրները, որ թողած տուն ու տեղ, և հայրենական օճախ ու ընտանեկան նամուսը, կը քշեն կուզան հոս,

ժամանակ երիտասարդին ճակատը շոյելով—Բացի սէրէդ, որ արդէն տրուած է երկիրին՝ չը վերագարձուելու պայմանով :

—Արի չի՞ն... Ո՛հ, մի ըսիր այդ այդպիսի բան չկայ, եթէ հարիւրներ ալ ըլլան, հնար չէ խել այն՝ ինչ որ քեզ է պահած :

Ա՛հ, անման հոգեակ՝ տարփելի կատու, այդ շրթները արժանի են համոզոյի : Ահա՛, եւ ահա փոխարէնը... Այո՛, երջանիկ պիտի ըլլանք մենք, ես ու դու, միշտ այսպէս իրարու հետ... Հեղ մը ես սեղմէ զիս թեւերուդ մէջ, այդպէս, համոզոյ մըն ալ...

Դ.

Առաւել քան վեց ամիս անցած է այս գոյգին առաջին լի է զօնին վրայէն :

Միացեալ կեանքը վերջապէս՝ այնքան ալ վարդաշար ուղի մը չէ, «Այլը սէր չէ կսէ անգլիացի հեղինակ մը եթէ այն չէ սէր՝ ճշտարիտ մտքերու» :

Դժբախտ Արսէն, հակառակ կրած յուսախաբութեան, տակաւին անկուղիւրօրէն փարած էր այդ աղջկան, Աննոյ յաճախակի անվայել ընթացքները ու վարձուքները տարած էր ոչխարային հլուութեամբ, հեց սարկութեամբ :

Շրջապատող բարիքան սայթա

տօլարներու կանանչ դէզերը փէշերին քայելու համար :

Խեղճե՛ր—որքան խարուած են եղեր :

Դէպի ո՞ւր, հայ եղբայր, դէպի ո՞ւր հոյ երիտասարդ, Տօլարներու երկիրը—Ամերիկա—պէտք է պատասխանէ քեզի ան :

Աւերիչ մասնաւոր յօգուածի մը վերապահելով՝ աւելի մանրամասն խօսելու Ամերիկայի գործաւորական կեանքին մասին, կուզեմ ըսել որ մեր հեռաւոր հայրենակիցները չի հրապուրուին և գան Ամերիկա, փոխանակ Ամերիկա գալու, պէտք է որ անոնք գիմեն դէպի երկիր՝ դէ՛պի Մայր Հայրենիք :

Դէ՛պի երկիր՝ դէպի երկիր՝ Այ պիտի ըլլայ իմ հրաւերը բոլոր հայ երիտասարդութեան, և բոլոր հայու սիրտ ունեցող հայերուն :

Դարձիր դէպի ետ, դէպի Հայրենիքդ Գիտցիր պաշտպանել հողդ ու պատիդդ : Բ. ՍԱՐԶԱՍԵԱՆ

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Ֆիլիպին ընկեր.— Ստացանք ձեր զրկ. ձերք ֆրանկը «տասն տարի Գաղթականութեան մէջ» բրոշուրի համար, բրոշուրը արդէն յանձնված է տղազրուութեան, ձեր ուղած թիւը կուղարկենք :

Վ Ր Ի Պ Ա Կ

Անցեալ շաբաթ օրուան Գաղթականական Գրոնիկին մէջ Ֆիլիպին եկած նամակէն քաղուած կտորներէն՝ «գաղթականական ատեաններու» շարուած է ստութիւններու :

Քիչ չըջանակը, ամէն բոլոր, ամէն ժամ նոր փորձութիւններու ենթակայ պատահարները ամենաթեթեւ չափով մըն իսկ չէին խախտած դեռ առաջին օրէն տածած սէրը հանդէպ այս բաղդի աղջկան, Բարիզուհիի յատուկ ամէն քամվար պատուէր ու բազմանք կիրազործուէր տնմիջականորէն : առանց վարանումի :

Ուսումնական շրջանը մոռցած էր : Մոռցած էր թէ բժշկութեան ուսանող մըն էր ինք : Գասաւանդութեանց շտա քիչ կը յաճախէր, իսկ առանձին հանդարտ բոլոր մըն ալ չկար՝ խաղաղիկ զբաղման նուիրուելու : Հազիւ խուցը առանձնացած՝ մէկ քանի հատորներու մէջէն անցնելու համար, Անժէլ կը ցցուէր առջին ու կը հրամայէր թողուլ, առաջարկելով կամ պտոյտ մը եւ կամ այս կամ այն վայրը այցելութիւն : Արդէն կը համակերպէր անշուշտ, Գննութեան շրջանը կը մոտենար, հարկ էր պատրաստուել, բայց ի՞նչպէս : Ուղեղն ալ, կարծես, տակաւորէն թթանալ էր սկսած : Հաճոյքի վայելքներու եւ մշտական վաւայ կենդանագաղթութեան մը անհատնում շղթային անխուսափելի հետեւանքն էր դա :

(Շարունակելի)

ըլլանք, Ըսէ՛, խոսէ՛...

Շիկնոտ, ամօթխած, վարանոտ երիտասարդը այլակերպուած էր մէկ քանի ամսուայ ընթացքին : Սրբեմն կարգացած ուսմաններուն թրթուրն պատկերները կարծես այնքան մէջը ու կեանքի է՛ն ժահհոտ երեւոյթները կը փոխուէին վսեմ ու մտացածին տեսարաններու :

Օրերորդը, հակառակ իր քսանամեայ տարիքին, որ բարիզուհիի մը համար շատ իսկ է, փորձառազտի մը պաղարիւնութեամբ կը դիտէր միամիտ ու պարզամիտ երիտասարդին զգացմանց բուռն արտագեղուցը : Տակաւին խօսք մը չէր ըսած, բայց եւ անպէս, դէմքին վրայէն երբեմնակի թաշող արտայայտութիւնները կարելի էին արգահատական եւս թարգմանել : Իրաւ է որ, գիպուածի գաւակ եւ բաղդի քմահաճոյքին ձգուած՝ զգացում, սէր եւ այլն մեռած բաներ էին իր մէջ, եւ թէ ինչ ըսէր կամ ընէր սահմանուած էին միայն հակառակ կամքին՝ կարճատեւ ու վաղանցուկ, այսուհանդերձ փոխուեցաւ երիտասարդ Արսէնի թախանձանաց ներքեւ :

Նայեցաւ հեղ մը եւս անոր ու ա կամայ երկու բառեր թոռն չըրինքն :

—Ո՞նց երեխայ...

Արսէն, վշտաբեկ ու ցաւոտ, թողուց աղջկան մէջքը՝ որ տակաւին թեւարկած էր եւ ինկաւ մօտը դրանուող բազկաթոռի մը վրայ, հազիւ

Հ Ի Վ Ի Է Ր

Հողաբարձութիւնս համախորհուրդ պատուարժան Թաղական խորհրդոյ հետ մտադրութիւն ունենալով Ազգ. երկսեռ վարժարանները եկեղեցւոյ բակին մէջ գտնուած վարժարանին մէջ կեդրոնացնելու Մանկուպարտէզն ալ այլուր փոխադրել, կը հրահրենք արգոյ հայ հասարակութիւնը այս կիւրակէ, 16 Յուլիս. յետ աւարտման Ս. Եկեղեցւոյ ժամերգութեանց, ներկայ գտնուել յ'Ազգ. վարժարան առ ի խորհրդակցութիւն վերոյնշանակեալ խնդրոց վերջնական կարգադրման:

Հողաբարձութիւն Ազգ. երկսեռ վարժարանաց (Կնիք)

ՊԱՐՏԵՂ «ՐԻԿԱ»

(ՀԱՃԻ ԲԱՆԱՒՄ)

Մեծարգոյ թատերասիրաց յայտնի է արդէն ինչ զանազան պատճառներ թէ ներքին եւ թէ արտաքին խորհրդ կացութիւնը զժուարացուցին, եւ այս առթիւ ոչքան որ յուսահատ ճգնաժամի մը յարած կաշխատինք վերստին նախորդ դրութեան վերածել եթէ մեծարգոյ թատերասէր ազգայինք մեզ օժանդակելու եւ քաջալերելու փութկոտութիւնն ունենալու հաճին, որով եւ մենք նորանոր երկերով պիտի գոհացնենք հանդիսականները եւ ահա ասոր ապացոյց, այս երկիւր պիտի ներկայացնենք առաջին անգամ ըլլալով

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԴԱՏ ՍԵ

անուն երեք արարուած նոր տրամբ, նոյնպէս երգեր եւ մնչկատակախղեր ուստի ներկայ հրահրագրով կը փափաքինք մեր ազգակիցներէն քաջալերական օգնութիւն չզանալով իրենց պատկանելի ներկայութեամբը պատուելի եւ նպաստել բարեհաճին ընդունելով կանխաւ մեր շնորհակալութիւնները:

Ընտանեկան Հայ դերս. խումբ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

13 յուլիս Պոլսէն կը հեռագրեն որ կովկասի հայ յեղափոխական կոմիտէն հրաման ղրկած է Օրմանեան պատրիարքին հրաժարիլ պաշտօնէն եւ Պատրիարքարանը գոցէ ինչպէս թուրքերու հայերուն զէմ ըրած հալածանքի զէմ բողոքի:

— Բ. Դուռը իր Սօֆիայի Գոմիսէրին հրահանգներ տուած է զիմուններ ընել պուլկար կառավարութեան որ բաւարարութիւն տրուի Վառձայի մէջ եղած ցոյցերուն պատճառով եւ Ս. Նիքոլայ Եկեղեցին նորէն յոյներուն վերադարձուի:

— Թուրքիան յայտարարած է որ ինք պիտի զիջուիներ ընէ պուլկարութեան վաճառականական զաշինքի մէջ, եթէ Պուլկարիա համաձայնի թուրքիոյ քաղաքա-

կան յանցաւորները թուրք կառավարութեան յանձնել, բայց թուրք—պուլկարական 1904 ապրիլի համաձայնութեան:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Յուլիս 13 ին Բեթերպուրի կէն Պերլին կը հեռագրեն հետեւեալը. թիկնապահ զօրաց մէջ խառնութիւններ ծագած ըլլալուն համար Բեթեր-Տօֆ պատերազմական զորութեան մէջ հռչակուած է. երկու ոպաներ պատերազմական ատենանի վճռով հրացանի քրոնուած են:

Հօնտօնի «Թրիպունա» թերթին Բեթերպուրիկի թղթակիցը կը հաղորդէ. երեսփոխաններու վերաբերեալ վերադարձած միջոցին ժողովուրդը համակրական շեղման ցոյցեր ըրաւ:

— Բարիկէն կը հեռագրեն թէ արտաքին գործոց նախարար Պուրժուա համոզուած է որ ոռու կառավարութիւնը պիտի խուզարկէ բոլոր օտար նաւերը Պալմիրիկեան նաւահանգիստներու մէջ, որպէսզի յեղափոխականներուն համար զէնքեր չը ներմուծեն:

— Պերլինէն կը հաղորդեն որ Հօտզէն եկած հեռագիր մը կը իմացնէ որ 35000 զործարար զործաթող ըրած են:

Օտէսայէն վրէննա կը հեռագրեն—ամեն օր ձերբակալուածներ եւ խուզարկութիւններ տեղի կունենան. նաեւ ռուս թրէնները փախստականներով լի են. յուլիս 12 ին միայն 1500 անցագիր պահանջուած է արտասահման անցնելու համար:

— Յայտնի ոռու հրապարակագիր Գիրբենեքով ձերբակալուած է որովհետեւ բարի գալուստ մաղթեր է վրպուրկէն վերագործող երեսփոխաններուն, որոնք Տուման լուծուելուն պատճառով գացած էին հոն իրենց նիւտները շարունակելու եւ ժողովուրդին ուղղելիք կոչը պատրաստելու համար:

— Տուման կոչով մը ժողովուրդէն կը պահանջէ զինուոր եւ տուրք չը տալ կառավարութեան քանի որ ան ապօրինի կերպով կը լուծէ Տուման եւ կուզէ կառավարել առանց ժողովրդի ներկայացուցիչներու հսկողութեան:

— Յարը հաստատեր է Ֆինլանտիոյ ազգային ժողովին բարենորոգում օրէնքները. նոր օրէնքներու համաձայն ֆինլանտուհիներն ալ պիտի քուէ տան:

— Նոր նախարարութիւնը բոլոր նահանգապետներուն հրամայած է խստիւ հալածել խռովարարները առանց չափաւոր տարրերուն վիստելու:

— Բեթերպուրիկի մէջ բոլոր թերթերը խափանուած են, բացի

«Նոփօէ Վ. Էմ. ս.», «Բոսիա» եւ Բեթերպուրիկի «Վէտոմոսթի» թերթերէն:

— Լուր կ'ը որ արտաքին գործոց նախարարը պիտի փոխուի եւ այդ պայտօնին պիտի անցնի Ջինովիկի:

— Լուր կը պատի թէ Յարը կը թակահար նախարար պիտի նշանակէ Տումայի նախագահ Մուրոճեանը:

— Ռուս երեսփոխաններու ժողովրդին ուղղած կոչին մէջ հետեւեալ սողերը կան. «ժողովուրդին, ժողովրդեան ներկայացուցիչներու կողմէն Սմբողջ Ռուսիոյ քաղաքացիներ. յուլիս 8-րդ օրէնքով Տուման լուծուեցաւ. զուրկուած է ներկայացուցիչները ընտրեցիք եւ պարտագիր ըրիք որ հող եւ ազատութիւն պահանջենք. Ձեր յանձնարարութիւնը եւ մեր պայտքը կատարած ըլլալու համար մենք օրէնքներ ստեղծեցինք ժողովուրդին ազատութիւնը ապահովելու համար: Պահանջեցինք հեռացումը ոչ պատասխանատու նախարարութեան որ անպատիվ կերպով օրէնքները ոտքի տակ տալով ազատութիւնը կը սեղմէր: Ահնէ առաջ մենք օրէնք մը ուղեցինք ստեղծել հողերը զիւղեցիներու մէջ բաժնելու համար զայն խլելով գահէն, վանքերէն եւ եկեղեցիներէն: Կառավարութիւնը այդ օրէնքը անընդունելի գտաւ եւ բոլոր մենք պնդեցինք մեր պահանջին վրայ, Տուման ցրուեց:

«Կառավարութիւնը կը խոստանայ 9 ամիս վերջը նոր Տուման հրահրել. Ամբողջ 9 ամիս Ռուսիան պիտի մնայ առանց ժողովրդային ներկայացուցիչներու, մինչդեռ ժողովուրդը սնանկանալու մօտ է, վաճառականութիւնը եւ արգիւնաբերութիւնը հիմախախտ, ամբողջ երկիրը խուզեալ վիճակի մէջ եւ նախարարութիւնը արգէն ապացուցած որ չի պիտի կարենայ զոհացում տալ ժողովրդի պէտքերուն. 9 ամիս կառավարութիւնը պիտի մաքառի ժողովրդական, շարժումի գեմի որ ուղածին պէս գործելով. եթէ յաջողի շարժումը խղիչ նոր Տուման մը չը պիտի հրահրէ. քաղաքացիներ պիտի պահանջէ երեսփոխաններուն ոտնակոխ եղած իրաւունքները. Ռուսիան պէտք չէ որ օր մը իսկ մնայ առանց երեսփոխաններու. գուր այդ նպատակին հասնելու միջոցները ունիք»:

«Կառավարութիւնը իրաւունք չունի առանց ժողովրդին ներկայացուցիչներու համաձայնութեամբ ժողովրդէն զօրք եւ տուրք առնել. Ասոր համար, հիմա երբ կառավարութիւնը Դուման կը լուծէ, զուրք իրաւունք ունիք

չը տալ թէ զրամ եւ թէ զինուոր»:

Ի այց եթէ կառավարութիւնը ստակ ունենալու համար զիմէ փոխառութեան, առանց երեսփոխաններու համաձայնութեանը առնելու, այդ փոխառութիւնները ապօրինի են. Պէտք չէ որ ոռու ժողովուրդը այդ փոխառութիւնները ընդունի եւ վճարէ: Կահին սանտիմ մը միտաք եւ ոչ զինուոր մը:

ԱՆԳԼԻՍ

Միջազգային երեսփոխաններու ժողովի բացման ճառը արտասանած միջոցին նախարարացօտ Եւրոպայի Պանդման Դուման յի կողմալուծման առթիւ հետեւեալ խօսքերը ըրած է. «Դուման մեռաւ, կեցցէ Դուման»:

Ճառը մեծ սլոգանութիւն գործած է զանազան յողաքական շրջանակներու մէջ եւ այն սիրալիր պիտաւորուած որ եղան ոռու երեսփոխանութեան ներկայացուցիչներուն:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նկարիչ Ֆէթիմեանի Անիի աւերակները գուճաւոր եւ գեղեցիկ աւրօմները եւ փոստ քարտերը մեծ քանակութեամբ ծախվում են վրէննայում պ. Գ. Ամատունու մօտ:

Ալլամի Կինը, փոստի ծախքով, 3 քրօն է. իսկ փոստ կայտերի հատը փոստի ծախքով 20 հեկլէր:

Պէտք է զիմել հետեւեալ հասցէին. Կ. Ամատունի

Ճերկուս Կաս թիւ 3 զիր 32. վիէննա

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՅԻՎ ՎԱՐՍՈՎԱՆ 102ԱԵ (Ձուրեցիկա)

Երգատար շրջան

Հօգանի հայ կրթարանը սահմանափակ թւով աշակերտներ կը ընդունի: Աշակերտներու ընդունելութիւնը տեղի կունենայ մինչեւ Սեպտեմբերի սկիզբը, այն ատեն կը սկսին դասախօսութիւնները:

Աշակերտներու ընդհանուր կըրթութիւնը կը կատարուի տեղական պետական ուսումնարաններուն մէջ. եւ ազգայինը, ինչպէս եւ թոյլ առարկաներու պատրաստութիւնը կը կատարուի մէջ. Ընտանեկան կեանք: Կրթարանս ունի ֆրանսերէնի եւ գերմաներէնի համար եւրոպացի ներքին օգնականներ:

Ընդունելութեան տարիք՝ 8-էն 15, Հինգ աշակերտներ զեղջով կը ընդունուին:

Մանրամասնութիւններու համար կարելի է զիմել Տիար Յ. Ս. Փափագեանին, (Ատանիարոյժ) Վառնա, կամ Տնօրէնին հետեւեալ հասցէով. Էն սթիթիւ Արմէնիէն 102ԱԵ (Սուխ)

Печатица на П. Глушковъ С Вар.